

29.08.13

Օգոստոսի 27-ին ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանը, փոխնախագահ Եղիշե Արզումանյանը և ԿԸՀ քարտուղար Ռայա Նազարյանն աշխատանքային այցով եղան Հաղորթի տարածքային ընտրական հանձնաժողովում:

Այցի նպատակը Հաղորթի շրջանի Նորաշենի և Խանձաձորի համայնքներում 2013թ. հոկտեմբերի 13-ին կայանալիք համայնքների ղեկավարների ընտրությունները կազմակերպված անցկացնելու խնդիրների հետ էր կապված, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցման կազմակերպման հարցերն էին:

Սրբուհի Արզումանյանը նշեց, որ ԼՂՀ կառավարության 2013թ. օգոստոսի 8-ի N 529-ն որոշման համաձայն՝ Հաղորթի շրջանի Նորաշեն և Խանձաձոր համայնքներում պետք է անցկացվեն համայնքների այն ղեկավարների ընտրություններ, որոնց լիազորությունների ժամկետը լրացել է: Այդ առնչությամբ տարածքային ընտրական հանձնաժողովի խնդիրն է՝ շահագրգիռ մարմինների հետ համատեղ աշխատանքներ տանել ընտրությունները կազմակերպված ու ԼՂՀ ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան անցկացնելու համար: Միաժամանակ նա անդրադարձավ ընտրատարածքին ու տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցման հարցերին և առաջարկեց շրջանում այդ ուսուցումը կազմակերպել 2 փուլով: Որոշվեց Հաղորթ քաղաքում սեպտեմբերի 4-ին, իսկ Բանաձոր գյուղում՝ սեպտեմբերի 5-ին անցկացնել ուսուցման դասընթացներ, որոնց կընդգրկվեն Հաղորթ քաղաքի և Տողի, Ուխտաձորի ու Բանաձորի ենթաշրջանների ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուները: Աշխատանքային խորհրդակցության ընթացքում ինչպես ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի, այնպես էլ ԿԸՀ ղեկավար անձնակազմի կողմից արվեցին մի շարք գործնական առաջարկություններ, որոնք նպատակաուղղված են տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքների հետագա բարելավմանն ու ընտրությունների անցկացմանը:

ԼՂՀ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը հանդիպեց նաև Հաղորթի վարչակազմի ղեկավար Վալերի Գևորգյանի հետ: Հանդիպման ընթացքում արծարծվեցին ինչպես առաջիկա ընտրություններին, այնպես էլ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուսուցմանն առնչվող հարցեր:

ՄԱ՝